

ԱՐԵՎԱԾԱԳԻՑ ԱՐԵՎԱՍՈՒՏ (Խորհրդային պոետները Ստալինին)

*Ես խնդրում եմ սովետական կառավարությանը՝
Կրկնապատկել, եռապատկել
Պահակախումբը Ստալինի շիրմի,
Որ Ստալինը վեր չկենա
Եվ նրա հետ՝ ստալինիզմը...
ԵՎԳԵՆԻ ԵՎՏՈՒՇԵՆԿՈ*

Վերջերս ձեռքս ընկավ մի շատ ուշագրավ գիրք՝ տպագրական բարձր որակով, շքեղ տեսքով, մուգ կապույտ կազմով՝ ոսկյա տառերով վրան դաջած «Ստալին»։ Կազմի վերևի մասում շրջանակի մեջ՝ առաջնորդի ռեյինֆային դիմաքանդակն է, գրքի կռնակին՝ հայկական ոճի ոսկյա նախշազարդերի միջև «Ստալին» անունը և թվականը՝ «1949»։

Բացում եմ գիրքը և առաջին էջին կարմիր տառերով գրված է վերնագիրը՝ «Ստալինը սովետահայ պոեզիայում»։ Ներքևում՝ «Երևան, Հայպետհրատ, 1949»։ Ֆորզացը ոսկեգույն լուծում ունի, ներքևում գեղեցիկ օրնամենտ, աջ անկյունում ոսկեներկ առաջնորդի պրոֆիլն է, ֆորզացի ձախ մասում՝ նույնպես ոսկետառ (գրքի գեղարվեստական ձևավորումը՝ Ռ. Բեդրոսյանի), Նաիրի Ջարյանից մի քառատող.

*Քո երդումով լուսավորված ամրոցը մեր աներեր
Ողջ աշխարհին տալիս է լույս և անթառամ օրեմքներ։
Քո երդումով դու քանդեցիր մահվան գաղտնիքն ահավոր.
Քո երդումով Լենինը կա, Լենինը դու ես այսօր։*

Գիրքն ստեղծված է, ինչպես որ գրված է տիտղոսաթերթին, «ժողովուրդների մեծ առաջնորդ Ի. Վ. Ստալինին ծննդյան 70-ամյակի առթիվ»։

Ժողովածուն բացվում է Դմիտրի Նալբանդյանի «Գեներալիսիմուս Ի. Վ. Ստալին» 1945 թ. արված մեծադիր գունավոր նկարով. առաջնորդը կանգնած է ողջ հասակով, հավանական է կրեմլյան իր աշխատասենյա-

կում, ետևը գրասեղանն է, մի եզրով երևում է անգամ լուսամփոփը, ապա գրադարակն է՝ լցված «Սովետական մեծ հանրագիտարանի» (ռուս. առաջին հրատարակությունը 1929-ից) կարմրավուն հատորներով: Ստալինն ընդգծված կովկասցու դիմագծերով է՝ թավ բեղեր, խրոխտ հայացք, գեներալիսիմուսի համազգեստով, իսկ կիտելի ծախ մասում միայն մեկ պարզևանշան՝ Սովետական Միության հերոսի Ոսկե աստղը: Իրականությունն ավելի ընդգծելու համար մանրահատակի (պարկետի) վրա Նալբանդյանը պատկերել է ստալինյան երկարաձիտ սև սապոգների սովերը, որ չարագուշակ ծգվում է ողջ աշխատասենյակով, այսինքն՝ ողջ սովետական երկրով մեկ...

Գրքի բնաբանն է թե նշանաբանը, ինքներդ դատեք, Ստալինի հետևյալ խոսքերը. «...Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղության և ազգային վերածննդի հնարավորություն»: Այս խոսքերում իրոք մեծ ժմարտություն կա. ոչ թե ստույգ սովետական իշխանությունը, այլ՝ այդ իշխանության «գաղափարը», այսինքն՝ իրականության փոխարեն դարձյալ ուտոպիա: Կրկին հետևենք Ստալինի մտքին՝ «խաղաղություն». ո՞ր էր որ. հիշենք, որ միայն 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի արյունալից մարտերում հայ ժողովուրդը, որ հեռու էր պատերազմական ռազմաբեմերից, 300.000 զոհ տվեց: Ծարունակենք՝ «ազգային վերածնունդ». հիշենք, որ սովետական իշխանության օրոք Արցախը բռնագրավեցին և նվիրաբերեցին Ազերբայջանին, Ջավախքը զոռով վրացացնում են, իսկ Նախիջևանը կարծ ժամանակում հայաթափ արեցին: Եվ դրա համար Ստալինը օգտագործում է ժիշտ բառը՝ «բերեց... հնարավորություն». էլ ի՞նչ եք ուզում, չէ՞ որ ձեզ տրվել է «հնարավորություն»: Մեզ տրվեց «հնարավորություն», իսկ տարածքները՝ Ազերբայջանին և Վրաստանին: Չէ, Ստալինը զարմանալիորեն անկեղծացել էր, իսկ գիրք կազմողները և խմբագիրները պարզապես չէին ընկալել առաջնորդի մտքի ուղղվածությունը:

Ժողովածուն լատինական թվանիշերով բաժանված է տասը մասի: Կազմողների մտահղացմամբ այդ մասերը համախմբված պիտի լինեին մի ինչ-որ ընդհանուր գաղափարով, մոտիվով: Ես այստեղ ներքին բաժանման մոտիվ չեմ նկատում, թերևս բաժանումը արհեստական ձևով է արվել: Այդ տասը մասերը չունեն ընդհանրացնող վերնագրեր, այլ՝ պարզապես լատինական թվեր: Մենք կփորձենք այդ մասերին պայմանական անվանումներ տալ: Եվ ստացվում է մոտավորապես հետևյալ պատկերը.

- I. Ստալին երևույթի պատմա-միջազգային նշանակությունը
- II. Սիրո և հավատարմության խոստովանություն

- III. Դրվագներ առաջնորդի կյանքի պատումից
- IV. Ստալինը և Սովետական սահմանադրությունը
- V. Առաջնորդը և համաժողովրդական ընտրությունները
- VI. Ստալինը հաղթանակած Կարմիր բանակի առաջնորդ
- VII. Սովետական կյանքի ծարտարապետ
- VIII. Հայ ժողովրդի մեծ բարեկամ
- IX. Առաջնորդի ծննդավայր Գորի
- X. Ստալինը ժողովուրդների երջանիկ ապագայի առհավատչա

Ինչպես տեսնում եք, այս չափածո «մոնումենտը» կազմողների՝ Ա. Ասատրյանի և Ա. Հայրյանի անանուն 10 մասերին մինչև իսկ կարելի է անվանումներ տալ: Իհարկե, կարելի էր պարզապես ժամանակագրական կարգով, մի ընդհանուր շարանով տալ այս բոլոր բանաստեղծությունները: Սակայն, ըստ կազմողների, գիրքը այդ ձևով ավելի ներկայանալի է. փորձ է արվել չանտեսել առաջնորդի գործունեության ոչ մի բնագավառ:

...1949 թվականն է, ողջ սովետական երկիրը պատրաստվում է մեծ հանդիսությամբ նշելու Ստալինի ծննդյան 70-ամյակը: 60-ամյակը այն չէր, 1937-1938 թթ. դաժանությունները դեռ չէին մոռացվել, դեռ հարյուր-հազարավոր ընտանիքներ մղկտում էին իրենց հարազատների կորուստները, իսկ մյուս կողմից՝ օր-օրի ավելի ստույգ էր դառնում հիտլերյան Գերմանիայի հետ պատերազմի վտանգը, և վերջապես, առաջնորդը դեռևս իրեն երիտասարդ էր համարում և գիտակցում էր հսկայական երկրի առաջնային անելիքները, և հոբելյանը կսպասեր: Այլ բան էր 70-ամյակը և 1949 թվականը. երկիրը հաղթել է պատմության մեջ նմանը չեղած պատերազմում, Արևելյան Եվրոպայի կեսը սոցիալիզմ էր կառուցում, և Ստալինին ճանաչում որպես առաջնորդ: Սովետական ժողովուրդը, որին 30 տարի առավուտից գիշեր ներարկել են գաղափարը, թե Աստված չկա, այլ կա Ստալին, որ կրոն չկա, այլ կա լեհինիզմ-ստալինիզմ, որ չկա հավատք, այլ կա կոմունիզմ... Արդեն 1949 թվականը տվեց իր արդյունքը՝ Ստալինն է ամեն ինչ. արևը ծագում է Ստալինի անունով, արևը մայր է մտնում Ստալինի անվամբ... Նա սովետական ժողովուրդների հայրն է: Այնպես որ, ամեն ինչ պատրաստ էր, որ արվի աշխարհացունց հոբելյանը:

Եվ մեր հորհրդային Հայաստանն էլ պետք է ետ չմնար, և եկած տեղն ապացուցեր, որ հայ կոմունիստները Հոռոմի պապից ավելի կաթոլիկ են... Սովետական հայ գրողների մի ամբողջ բանակ պետք է ապացուցեր իր հավատարմությունը առ կրեմլյան տիրակալը: Պետք է մեկը մյուսին գերազանցեին ավելի բարձր էպիտետներ առաջնորդին շռայլելով, առավել բարձր երկրային առաքինություններ պարգևեին, այս

յուրահատուկ միտումը մարդկության (արվեստի կամ պոեզիայի) պատմության մեջ միշտ բնորոշ է եղել մեծագույն բռնակալների տիրակալության օրոք, լինի դա Կալիգուլա թե Ներոն, Դիոլետր թե Մաո Ցզե-Դուն: Եվ այն դրոշմված է մոնումենտալ արձաններում. պաթետիկ օրատորիաներում, բանավոր առասպելներում և երգերում, ինչպես և նման շքեղ գրքերում, որը մենք գրախոսում ենք:

Ստալինյան փառքը գովերգող հայկական ավանախին պիտի մասնակցեին բոլոր-բոլորը՝ Ավետիք Իսահակյանը, պրոլետ գրականության հիմնադիր Զակար Զակոբյանը, ստալինյան տրոֆադուրիզմի ժանրի դասականը՝ Նաիրի Զարյանը, կրեմլյան «ոսկե դարի» փորձված ծայրեր Գեղամ Սարյանը, Սարմենը, Սողոմոն Տարոնցին, Զեփիսիմե Պողոսյանը, Մարո Մարգարյանը, արդեն «անձի պաշտամունքի» փառաբանման մեջ հմտացած ծայրեր Աշոտ Գրաշին, Աղավնին, Ռուստամ Զալի գործի մերօրյա տաղանդավոր շարունակողներ Զովհաննես Ծիրազը, Զրաչյա Զովհաննիսյանը, Վահագն Դավթյանը, գուսան Զամո Սահակյանը (նույն ինքը Զամո Սահյանը), Պարույր Սևակը, Սիլվա Կապուտիկյանը և գործի շարունակողները, բայց շնորհիք այլ մակարդակով, Սուրեն Վահունին, Գևորգ Էմինը, Գուրգեն Բորյանը, Բաբկեն Կարապետյանը, Սամվել Գրիգորյանը, Գևորգ Զայրյանը, Զենրիկ Թումանյանը, Վահան Գրիգորյանը, Սաղաթել Զարությունյանը, Ցական Ծողենցը, Վահան Արամունին, և դեռ բոլորովին երիտասարդ ծայրեր՝ Արարատ Այվազյան, Գրիգոր Գյուլյան, Անդրանիկ Թերզյան, Գևորգ Զարգարյան, Գրիգոր Արտունի, Գրիգոր Գարունց...

Մի ամբողջ համբարություն է կազմում փորձված կամ թե անփորձ գուսան-աշուղների ցեխը՝ Գուսան Ենրամը, Գուսան Ենոքը; Ալեքզադեն, Գուսան Աշխույժը, Գուսան Զավասին, Գուսան Զրկեզը, Գուսան Սերոբը...

Ինչպես ասացինք, ժանրն ուներ իր դասականը, նրա երկով է սկսվում գիրքը և մասերից շատերը, նա գրքի շարժիչ ուժն է, և ընդհանրապես մեկնաբանելով Ստալին ֆենոմենը խորհրդային պոեզիայում առաջին հերթին մեր միտքն է գալիս Նաիրի Զարյանի քրեստոմատիկ տարածում ունեցող «Ստալին» բանաստեղծությունը.

*Աքիլեսին Դոմերն երգեց, Ռուստամ Զալին Ֆիրդուսին,
Ոսկեգոծվեց հազար երգով Բոնապարտի փառքը սին,
Զազար կայծակ փայլատակեց մըրրիկներում արնաներկ,
Ու շողացին գիշերներում հազար ասուպ, հազար երգ:*

Այս գրքի գլխավոր խմբավարը կարող է համարվել Նաիրի Զարյանը, այստեղ նրա՝ պալատական երգչի և նվիրյալ ստալինիստի տաղանդն իսկապես բացվել է, նրա անունը զարդարում է գրքի համարյա բոլոր մասերը, ինը պանեգիրիկներով է նա այստեղ հանդես գալիս (հա-

պա փորձեի՞ն ավելի քիչ տեղ տային, բոլորի աչքը կհաներ): Եվ ծշմարտության դեմ մեղանշած չենք լինի, եթե ասենք, որ այս բնագավառում (ներքողներ հյուսելու ժանրում) նա համարյա թե հավասարը չունի, նա այստեղ հասնում է ժանրի բարձունքների: Ասածիս լավագույն վկայությունը «Ստալին» բանաստեղծությունն է, եթե չեմ սխալվում, գրված հենց Մոսկվայում, 1935 թվականին:

... Հազար Հոմեր ու Ֆիրդուսի կառնեն գրիչ ու քընար,
Ու երգելով չեն ըսպառի Ձեր մեծությունն անհնար:
Կերգեն բոլոր լեզուներով բանաստեղծներ նորանոր,
Կրտան դարերը Ձեզ վայել հուշարձաններ փառավոր:
Իսկ ես, զհնվորդդ խանդավառ, հայ լենինյան բանաստեղծ,
Բերում եմ քեզ ժողովրդիս երախտապարտ սիրտը մեծ:
Երգում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենքին,
Դու՝ ազգերի երջանկության ժարտարապետ ու դարբին:

Հապա «Դյուցազնագիրք» պոեմը, որից սոսկ նախերգանքն ու վերջերգն են բերված խնդրո առարկա ժողովածուում: Այստեղ կարծես Նաիրի Ջարյանն ինքն իր հետ մրցում է, որ աշխարհին ցույց տա, թե չկա իրենից ավելի նվիրյալ Ստալին երկրպագող.

Երբ գիշերվա ուշ պահերին,
Ծղխամորժից անբաժան,
Դու մագիստրալն ես որոշում մեր մարդկային պատմության,-
Հիշում ես քո Սվետլանա՝յին,
Ու, որպես հայր ըզգայում,
Թերթում նըրա դասագրքերն ու տետրակները նայում:
Չափել սահմանը քո սրտի՝
Դժվար է շատ,
Ուժից վե՛ր,
Պետք է լինել մի Ֆիրդուսի,
Կամ նոր կախարդ մի Հոմեր:

Դու արգելքները պատմության խորտակեցիր մեծաբար,
Կյանքըդ դարձավ դյուցազնական դըրվագների լեռնապար:
Ահա կանգնած է իմ առաջ
Որպես Մասիս բարձրաբերձ,
Ցարիցինյան քո էպոպեն,
Եվ ես,
Անխոնջ բանաստեղծ,
Դեպի կատարն եմ մազլցում՝
Սըրտումըս դող ու կորով՝
Մեր հայկական վիպերգության բազմադարյան ոտքերով:

Ինչի ասես, որ պատրաստ չէ Ջարյանը իր պաշտամունքի օվսաննան երգելիս: Ահա նա իր նոր «Վերածնունդ» բանաստեղծությունում մահաբեր հարված է տալիս հայոց բուրժուազիային.

*...Ու ծնվեցին երկրի վրա ոսկու խարդախ արքաներ:
Քո տառապած մարմնի վրա բուսավ մի նոր թշնամի,
Ավելի ժանտ, քան դահիճներն անցյալ բոլոր դարերի.
Քո թշնամին այդ նենգավոր կոչվում էր հայ փողատեր,
Նա քո արյունը վաճառեց շուկաներում շահաբեր...*

Ահա նա երգում է Սևանի չորացման ստալինյան ծրագիրը.

*Սևանա լիժը, լեռների գեղեցկուհին կապուտաչ,
Որ քեզ դյուբել է դարեդար ու մնացել անընկալ,
Այսօր իջած իր բարձունքից՝ անցնում է խոր ծորերով՝
Տալով քեզ լույս ու զորություն ու ջերմություն ու կորով:*

Նաիրի Ջարյանի ստալինիական, որն այնպես ցայտուն երևում է այս ժողովածուում, խոսում է այն մասին, որ Ջարյանը տաղանդից զուրկ բանաստեղծ չէ, վերջին հաշվով եթե գրածը մեթակապարանոց դեկլարացիա լինի, սոսկ լուզումգ, նա ազդեցություն չի ունենա ընթերցողի վրա, և հետո ի՞նչ երևակայությամբ պիտի օժտված լինես, որ ինքը քեզ չկրկնես (հիշենք, որ նա մի շարք գործերում արդեն պարզապես շահագործում է Դոմերոսի կամ Ֆիրդուսու անունները): Այո՛, Ջարյանը պիտի զոռ տար իր երևակայությանը նոր իրավիճակ. նոր պատկեր գտնելու համար, որ իր հավաքած աթոռակներով (տաբուրետներով) ձգներ հասնել Ստալինի սապոգների ծայրին:

«Կոմունիզմի գորավարը» (Մեծ Ստալինին պաշտպանության ժողկոմ նշանակելու առթիվ) պանեգիրիկի համար Ջարյանը բնաբան է ընտրում իր իսկ գրած «Դյուցազնագիրք» պոեմից (նույնպես աննախադեպ երևույթ հայ պոեզիայում): Ի՞նչ աներ Ջարյանը, եթե իրենից լավ ոչ ոք չէր կանխորոշել Ստալինի ուղին.

*• «Եվ ուղարկում էր քեզ Լենինն
Այն ձակատները դաժան,
Որտեղ ապրում էր հայրենիքն
Օրհասական ձգնաժամ»:*

Ու էպոսի մշակման փորձ ունեցող Ջարյանն այս իր գործի սկզբնատողը սկսում է «Սասունցի Դավթի» ոճով.

*Ելավ Ստալինն առաջնորդը մեծ ժողովուրդների,
Ելավ ու կանգնեց իր վիշապաքաղ բանակի գլուխ:
...Իր ձեռքին բռնած Լենինի անունն իբրև թուր կայծակ,
Ջինված հին ու նոր զորավարների հանձարեղ փորձով,
Դյուցազներգական այն Սովորովի նման համարձակ,
Եվ խորն ու խոհեմ իբրև Կուսուղով:*

Իսկապես որ Զարյանն իր ընթերցողին շունչ առնելու ժամանակ չի տալիս: Հագիվ էր լրացել առաջնորդի 60-ամյակը, հագիվ էին հաշվեհարդար տեսել հայոց պոետական այգու «ծառ ու ծաղկի» հետ, և ուր փարթամ փթթում էր մոլախոտը, և ուր որոճում էր հայոց պոեզիայի Պեգասը, երբ վրա հասավ Մեծ հայրենական պատերազմը՝ տալով մի նոր, աննախահեպ հնարավորություն ցուցադրելու հավատարմությունն առաջնորդին:

Ու մի նոր փուլ էր սկսում՝ ռազմական պատմիչի տեսանկյունից գրվաբանել առաջնորդ-զորահրամանատարի նոր արժանիքները: Այս ասպեկտով պետք է դիտենք Զարյանի 1942 թ. գրած «Լսե՛ք, դարե՛ր» պաթետիկ դիֆիրամբը.

*Դուք կըտեսնեք Ստալինի ուրվանկարն ահագին,
Որ մեր դարի պատվանդանին կանգնեց հավետ անասա՛սան
Որպես կամքի, խիզախության մի հրաշակերտ հուշարձան:*

Եվ կամ թե «Կոմունիզմի բանակ» հանգավորված լոզունգը: Զարյանը մի մոտիվ էլ է յուրացրել և անընդհատ կրկնում է իր պանեգիրիկներում, թե որքան դժբախտ, չարքաշ ու հյուծված, անարգ ու ստրուկ է եղել հայ ժողովուրդը՝ ոսոխներից հալածված, և հիմա, դու, փրկիչ գորիյան, եկար ու ազատագրեցիր իմ տարաբախտ ժողովրդին: Գոնե ասեր. ես՝ Հայաստան եղիազարյանս, որք եմ եղել ու սոված, գաղթել եմ Վանից ամերիկյան որբանոց, ծառայել եմ սկզբում Առաջին Հանրապետությանը, հետո՝ սովետներին, «աչք ու ունքով» կատարյալ չեմ եղել և չիմացած անգամ, թե ո՞վ էր Սալիերին, սակայն ապրել եմ նրա նշանաբանով: Ուստիև ասում է. «Ո՛վ պողպատե Առաջնո՛րդ», դու ինձ կարգեցիր Հայաստանի «ծաղկածիծաղ լեռներում... մի խանդավառ բանաստեղծ» դարձրիր:

Երկրորդ պատվավոր տեղը առաջնորդին դիֆիրամբներ ձոնելու մրցավազքում պատկանում է մեր սիրելի Հովհաննես Ծիրագին:

Դե փաստ է, Ծիրագը շատ տաղանդավոր է, փաստ է և, որ Ծիրագը սիրել է շատ գրել. ապագայի նրա չափածո ստեղծագործությունների հավաքածոն կընդգրկի մոտ 10-12 հատոր. լավ է թե վատ, դատեցեք ինքներդ: Սակայն զուտ բանաստեղծություն մեր մեծ պոետները՝ Թումանյան, Իսահակյան, Չարենց, 3-4 հատորից ավել չեն գրել:

Իսկ Ստալինին աստվածացնելու (մեղա, Տեր) սոցմրցմանը Ծիրազը ըստ ամենայնի լծվել է մեծ եռանդով ու լայն ընդգրկումով. բաց արեք պատերազմական և ետպատերազմական խորհրդահայ կենտրոնական թերթերի հավաքածուները և ամենուրեք ձեր աչքին կգարկեն Ծիրազի գրվածքները, որոնք ծայրեծայր զբաղեցնում են պաշտոնաթերթերի առաջին էջերը:

Ծիրազյան ստալինապատումի մեջ առանձնանում է «Մեծ Ստալինին» (1944 թ.) բանաստեղծությունը: Ծիրազը, ինչպես ասացինք, տաղանավոր բանաստեղծ է և տաղանդը չես կարող թաքցնել. ասենք, որ Ծիրազը հեռու էր նաև կեղծ ու հաշվենկատ գովեստներից, նա վերապրած զգացմունքով է գրել իր ներբողը՝ չմոռանալով հիշատակել հայության խորհրդանիշի մասին.

Դու չե՛ս թողնի մեր Արարատ լե՛ռն էլ պանդոպստ մնա հեռվում:

Իրապես Ծիրազը պրկել է իր պոետական տաղանդը և անսանձ երևակայությունը՝ ջանալով հավասարվել Զարյանի «Ստալին» բանաստեղծությանը (1935թ. գրված): Թերևս բավարարվեց միայն սկզբնական հատվածով.

*Դու սրտիս մեջ ու պատկերդ կախած ունեմ իմ սնարին,
Որպես հորս պատկերը սուրբ, որպես ոգի իմ քնարին,
Ու շամբերից մեր կուսական կտրած սրինգն իմ եղեգնայ՝
Քեզ եմ երգում շանգու դառած լեռների մեջ մեր քյուրակնյա:
Քեզ արևը պիտի լինի հաղթանակի շքանշան,
Քանզի կուրծքդ մի երկինք է քո մեծ սրտով իմաստության:*

Եթե ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը պատերազմից հետո սահմանել էր երկրի բարձրագույն պարգևը «Հաղթանակի շքանշան», իսկ Ծիրազը Ստալինի համար իր պարգևն էր սահմանել՝ «Արևը»: Թվում է, թե սրանից այն կողմ ի՞նչ կարող է լինել: Այո՛, Ծիրազը այստեղ էլ է ուզում գրավել առաջնության դափնին: Մյուս երկու բանաստեղծությունները, մանավանդ «Տաղ Ստալինին»-ը շատ է շիրազյան.

*Գարնան աչքից սիրտս մտած արևի պես անունդ անուշ,
Կարոտակեզ սիրահարի արևի պես անունդ անուշ:*

Եվ եթե մի պահ պատկերացնեինք, թե դա տաղ է՝ նվիրված սիրեցյալ աղջկա, և մի փոքր սրբագրում կատարեինք, կտեսնեինք, որ այս երկը ավելի քնարական զեղում է, քան թե անձի պաշտամունքի արգասիք: Այստեղ օրիգինալ է իր բնույթով «Օրենք արևագիր» բանաստեղ-

ծությունը, ուր կրկին իր «Առաջնորդ արեգակով» Ծիրազը ձգտում է գերազանցել «Ժանրի դասական» Նաիրի Զարյանին:

Ի՞նչ է ցանկացել ասել Ծիրազը իր «Օրենք արևագիր» բանաստեղծությամբ, ընթերցողին մինչև վերջ հայտնի չէ, մեզ թվում է Ծիրազին էլ հայտնի չէ: Ի դեպ, այս տեմդեմը, երբ գեղեցիկ ասելիքը կա, սակայն միտքը չկա, հատուկ է ոչ միայն Ծիրազին, այլև հայոց ստալինիադայի շատ բանաստեղծների, մարդիկ խինդի ու ցնծման տարերքի մեջ հաճախ ընկնում են էյֆորիայի մեջ և կորցնում բանական մտքի թելը... Ծիրազն էլ «խորիմաստորեն» ուզեցել է բացահայտել «Օրենք արևագիր» խոսքերի տակ «Ստալինյան կոնստիտուցիայի» էությունը, սակայն իր պոետական էքստազի մեջ գնում է տիեզերական հեռուները, մոռանալով, որ կոնստիտուցիան գրված էր երկրի վրա ապրող մարդկանց համար:

*Տիեզերքում, լուսի գրկում երկու տեղ կա ազատ կյանքով,-
Մեկը իմ նոր երկիրն հզոր, մեկ էլ մեր լայն երկինքը մով...*

*...երկրիս վրա մշտադալար կյանքն է գարնան հասակ առնում,
Ինչպես աստղեր ազատասեր՝ սրտերն ամեն սեր են դառնում,
Եվ նրանց հետ աշխարհագետ մեր Ստալին արև-հսկան
Վարում է ողջ կյանքը անխոնջ դեպի ծովը երջանկության:*

Իսկ, օրինակ, շիրազյան «Բաղձանք» բանաստեղծությունը (1939-1949 թթ.) մի խոսուն նմուշ է Ծիրազի այն չափածո գործերի, որոնցով նա ողողում էր 1940-ական թվականներից հայաստանյան թերթերը, ընդ որում՝ հաճախ ծայրից ծայր:

Ծիրազի սրտագին բաղձանքն է, որ Ստալինը գա Զայաստան, հանդիպի իր ընտրողներին և անձամբ տեսնի այն փոփոխությունները, որ արվել են իր իմաստուն ղեկավարության օրոք: Ծիրազն այստեղ ևս ի սպաս է դրել իր ոճին բնորոշ թե՛ չափազանցումները, թե՛ գեղարվեստական պատկերները: Ծիրազն իրոք երկը գրել է մեծ ոգեշնչմամբ.

*...Մեր լեռները երբ դու գաս,
Իմ ծերունի մոր սիրտն էլ՝ ձնծաղիկով կցվի:
...Ուտքդ ուր էլ որ դիպչի՝ հողից գարուն կբուրի,
Օրորոցի մանկիկն էլ՝ լեզու կառնի, կժպտա,
Թոթովանքով առաջին քո սուրբ անունը կտա...
...Իսկ Սևանա մեր ծովը, որպես մի թաս, գինով լի՝
Կբարձրացնենք ձեռքերով մեր Գեղամա լեռների,
Կբարձրացնենք աշխարհում քո կենացը ոսկեղեն,
Քո կենացը ու մեզ հետ աստղերն անգամ կխմեն
Քո կենացը ոսկեղեն...*

Ստալինին հայրենի հողի վրա տեսնելու բաղձանքը այնպես է ոգևորել Եփրազին, որ նա գտարյուն ու հագեցած քնարական պատկերներ է առաջ բերել իր երկում, և զգում ես, որ Եփրազն ի տարբերություն շատ և շատ բանաստեղծների, անկեղծ է իր գրվածքում.

*Թեև ամեն ծաղկի մեջ քո ժպիտն է բողբոջում,
Թեև ամեն սրտի մեջ քո երազն եմ տեսնում ես,
Թեև երկրիս լույսերով քո հայացքն է հասնում մեզ,
Թեև ամեն մի հոգում քո պատկերն է ծառագում,
Թեև գործդ աշխարհին է, բայց սրտիս պես անդադրում
Քեզ են կանչում քո որդիք, ե՞րբ ես գալու մի անգամ,
Քեզ է կանչում իմ կանչով հայ ժողովուրդն անթառամ,
Քեզ է կանչում իմ կանչով զմրուկստ երկիրն իմ հայոց,
Քեզ է կանչում Արարատ գերված կայմը քո որդոց,
Քեզ են կանչում աչքերս Սևանա ծով, Վանա ծով...*

«Բաղձանք» բանաստեղծությունը հաստատում է, որ այս ներբողների դաշտում էլ Եփրազն ի վիճակի է գերազանցել Նաիրի Ջարյանին: Դե, Եփրազը մնում է Եփրազ...

Գանք այս գիրք-«մոնումենտը» կերտած մեր մյուս բանաստեղծներին, գանք տարիքային հերթականությամբ, թեև այն ժամանակ գերակշռող մասը դեռ միջին հասակի ստեղծագործողներ էին: Երեքական բանաստեղծություններով անթուլոգիայում ներկայացված են Գեղամ Սարյանը, Սարմենը, Սուրեն Վահունին, Աշոտ Գրաշին, Աղավնին, Բորյանը և Էմինը: Զարկ է ասել, որ պոետական ցեխում նուրբ քնարերգուի և Արևելքի պերճանքի պոետի համբավ ունեցող Գեղամ Սարյանի մոտ ստալինյան թեման լավ չի ստացվում, և ոչ թե նա չի կամեցել կամ քիչ է երգել, ո՛չ, ինչքան ուզես՝ «Խոսք ընկեր Ստալինի վաթսուամյակի առթիվ», «Երգ Ստալինի մասին», «Հիմն առաջնորդին» և դեռ չհաշված բազմաթիվ մյուս գրվածքները, որոնք չեն ընդգրկվել սույն ժողովածուում: Բանաստեղծությունները պարզապես անդեմ են, ոչինչ չասող. լինեն թե չլինեն՝ նույն հաշիվն է.

*...Մեր ընտանիքն է մեծ,
Սովետական հողում
Մեռ մեծ եղբայրության
Դրոշն է շողշողում,
Նրա փայլի ներքո
Հպարտ և աննահանջ
Գնում ենք մենք երգով,
Գնում ենք մենք առաջ...
(«Երգ Ստալինի մասին»)*

Սա ավելի շատ դպրոցական պատի թերթին է սագական:
Կամ թե ստեղծագործական «տառապանքների» մեջ ծնունդ առած,
առաջնորդին ձոնված Սարյանի հիմնը.

*...Փա՛ռք քեզ, փա՛ռք քեզ, մեր պայքարի դրոշակ,
Մեծ առաջնորդ, դու աշխարհի փրկություն,
Դու հույս, դու լույս, դու կառուցում, հաղթանակ,
Դու մեծ ուժի և հավատի ամրություն:*

Այստեղ ո՛չ ինքն է երևում, ո՛չ Ստալինը: Արդյոք այսքա՞նն էր կարողությունը ծանաչված քնարերգու Գեղամ Սարյանի: Դրությունը չի փրկում նաև Սարյանի մոգոնած «Գեղջկուհու երազը», երբ հայ գեղջկուհուն երազի մեջ հերթով գալիս են Լենինն ու Ստալինը. լավ է, որ խեղճ գեղջկուհին չի ցնդում, բայց Գեղամ Սարյանի մոտ իսկապես որ վերը խառն է: Երազ, որ մենակ Ֆրեյդը կմեկնաբաներ:

Բանաստեղծ Սարմենը, որ Ստալինին շատ բանով է պարտական կյանքում՝ հրաշքով փրկվել է ջարդերից, գաղթ, մանկություն մանկատներում, և հետո արդեն ստալինյան լուսի ներքո Պետհամալսարանի շրջանավարտ, ԶԳՄ անդամ, ԶՍՍՀ պետական հիմնի տեքստի հեղինակ: Այնպես որ, նրա պանեգիրիկները՝ ուղղված Ստալինին, պետք է մտածել, որ անկեղծ սրտով են գրված, անկեղծը անկեղծ, բայց և կան այնպիսի սրբություններ, որ չպետք է ձեռք տալ, անգիտակից մաղթանքներով չցնցել նորմալ բանականությունը.

*...Ծիծաղ ծաղկով զարդարվել է մեր վառ կյանքի նորը պայծառ,
Զմռան բուքին էլ մեր սրտում մայիսական օր է պայծառ,
Հայաստանից հազար ողջույն ժողովրդի հորը պայծառ,
Արարատից երկար ապրես, վեհագագաթ սար Ստալին:
(«Հավերժական հուր»)*

Սարմենի «Ստալին» բանաստեղծությունը շատ է հիշեցնում Գեղամ Սարյանի Ստալինապատումի երկերը. մարդու ո՛չ մտքին, ո՛չ հոգուն ոչինչ չասող հանգավորված դեկլարացիաներ: 1949 թ. առաջնորդի 70-ամյակի առթիվ է գրված Սարմենի «Երգ երջանկության»-ը: Սա պոետի մենախոսությունն է առ առաջնորդ: Նա ընկերավարի, մտերմիկ դիմում է Ստալինին և կենաց բարձրացնում.

*Բաժակն առաջին
Խմենք լուսաջինջ
Այն մարդու կենաց,
Որ մեր աշխարհքին
Բերեց խնդագին
Կյանքի այգաբաց:*

Եթե Ձարյանն ու Ծիրազը իրար հետ են մրցում, ապա իրար հետ են մրցում նաև Սարյանն ու Սարմենը, և այս մրցույթում նրանց են միանում բանաստեղծուհիներ Աղավնին և Մարո Մարգարյանը: Աղավնին էլ իր կյանքի պատումով պարտական է խորհրդային իշխանությանը, սակայն նրա գրածն էլ մի կիշե էր՝ հեռու ստեղծագործական տվայտանքներից: Ամեն ինչ ի սկզբանե որոշված էր, սարքված, մնում էր տակը հեղինակը դներ իր ստորագրությունը, տվյալ դեպքում Աղավնի: Ինչպես և՛ Մարո Մարգարյան:

*Քարոտ էր մեր բախտի ոտին ու կարիքը ծովածավալ,
Բևեռային գիշերվա պես մեր առօրյան ցուրտ էր, դաժան,
Դո՛ւ էիր, որ ծառագեցիր քո հանձարով արեգմափայլ,
Ու տարար մեզ լուսապարար հանգրվանը երջանկության:
(«Ստալին»)*

Ժիշտ է, հաջորդ երկու բանաստեղծություններում Աղավնին փորձում է կոնկրետ սյուժե ներդնել՝ «Ստալինն ու Ելենան»։ Նա պատմում է, թե ինչպես Կրեմլում 1935 թ. շքանշանակիր կոլտնտեսուհի Ելենա Աբրահամյանին բախտ է վիճակվել նկարվել Ստալինի հետ։

*Արփաչայի ափերից մինչև Կրեմլ նա հասավ,
Ստալինի սիրառատ գգվանքներով լիացավ:
Ու գլուխն իր զանգրահեր հենած մեր հոր լայն կրծքին,
Տեսե՛ք, որքան երջանիկ նա ժպտում է ամենքին:
Ջա՛ն, ծիծաղիր ու ցնծա այդ գգվանքից հարազատ,
Հայրենիքիս վարդ աղջիկ, իրավագոր ու ազատ:*

Սյուա երկում՝ «Ցորենը», միջուրինյան մի երիտասարդ գյուղատնտես պատմում է, թե ցորենի նոր մշակած բերքառատ հասկին ինչ գնահատական է տալիս Ստալինը։

*Ապա Առաջնորդը, հպարտությամբ մի խոր
Կշռում է ձեռքի մեջ հասկը հինգ թևանի
Եվ իր վաղածանոթ ժպիտով հմայիչ՝
Դառնում է գյուղացուն, ապա գիտնականին.
- Ցանեցի՞նք:
- Ցանեցի՞նք, Իոսիֆ Վիսարիոնովիչ:*

Մարո Մարգարյանի բանաստեղծությունն էլ երկարաշունչ ստերեոտիպների շարքում է, որովհետև նրա կյանքն էլ յուրովի ստերեոտիպ էր: Ծնունդով Վրաստանից, հետո Երևանի Պետհամալսարան, ուսման շա-

րունակությունը՝ Մոսկվա, ապա 1940-ական թվականներից՝ «ժիշտ» բանաստեղծություններ: Նուրբ հմայքով թելադրված քնարական տողեր, բայց և պատասխանատու աշխատանք Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեում: Եվ առաջիններից մեկը կապիտալիստական երկրներ ելումուտ անող: Ռուսները լավ բառ ունեն՝ «верноподанная»: Ուրեմն կարող էր, ավելի ժիշտ՝ պարտավոր էր ավելի լավ գրել իր «Երգ Առաջնորդին»-ը.

*Նրա պայծառ հայացքի տակ կանաչել են քարերն անգամ,
Չմռան դաժան մրրիկներից սառույց հազած սարերն անգամ,
Նրա պայծառ հայացքն է միշտ շողշողում նոր մարդու վրա,
Որի ապրած մի վայրկյանը արժե հազար դարեր անգամ:
...Ողջ շախարհն է երգում հիմա հաղթ ու հզոր ձեռքը նրա,
Ոմանք պայծառ սիրտն ու հոգին, ոմանք մտքի բերքը նրա...*

Այ այս «верноподанная» հասկացությունը շատ հարազատ է մեր ժողովածուում երեքական գործ ներկայացրած բանաստեղծներ Սուրեն Վահունում, Գուրգեն Բոբյանին և Գևորգ Էմինին:

Թեև երբեք իր բանաստեղծական տաղանդով աչքի չի ընկել Սուրեն Վահունին, սակայն այս ալմանախում Ստալինի հանդեպ քծնանքի աստիճանով կարող էր հեկորդ սահմանել: Հարկ է ասել, որ քծնանքը եղել է այս ժողովածուի մասնակիցների ստեղծագործական հիմնական խթաններից (ստիմուլներից), դրդիչ ուժերից մեկը: Բայց կա քծնանք ջողարկված, կա արվեստի ձև տված քծնանք, բայց կա և ներկապարանոց քծնանք: Դատեցեք ինքներդ, XXI դարի ընթերցող, Սուրեն Վահունու այս շեղերի մասին, ուր երկի լեյտմոտիվն անգամ ինքը չի հորինել, այլ փոխ է առել ղազախ մեծանուն ակին Ջամբուլ Ջաբաևից.

ԱՆՈՒՆԸ

**Ինչի՞ հետ քեզ համեմատեմ...
Ջամբուլ**

*Միտք եմ անում Ջամբուլի պես և քեզ արժան խոսք չեմ գտնում,
Ես քեզ ինչպե՞ս արև ասեմ, քանի որ նա մայր է մտնում,
Ինչպե՞ս չափեմ օվկիանի հետ, երբ նա ունի ափ ու հատակ,
Ինչպե՞ս ես քեզ լեռ անվանեմ, երբ լեռն է մութ ամպերի տակ,
Եթե ասեմ անշեջ կրակ - նա էլ վառվում է հեքիաթում,
Իսկ դու շողում ես անհատնում երկրի վրա և մեր սրտում:*

Ինչի՞ հետ քեզ համեմատեմ: Սհա ծովեր, երկինք ու հող,
Սհա կապույտ հեռաստաններ, արշալույսներ շռայլաշող,

Ահա պայծառ հովիտներում վառվող ծաղկունք ու ծիածան,
Ահա ծորեր անդնդախոր, ահա գետեր որոտածայն...
Բայց որի՞ հետ համեմատեմ, չէ՞ որ նրանք միշտ էլ կային,
Երբ որ չքնաղ այս աշխարհում ապրում էր վիշտը մարդկային:

...Բայց ես գիտեմ ծանոթ մի բառ, և երբ ես այդ բառը ասեմ,
...Պիտի տեսնեն այդ բառի մեջ և՛ արևներ, և՛ սեր, և՛ բախտ,
Ժողովուրդներ վերածնված, նրանց սիրո դաշինքն անխախտ...
...Այս բառի մեջ ազգեր բազում և սերունդներ, որ պիտի գան,
Պիտի տեսնեն այս աշխարհի չքնաղ այսօրն ու ապագան...
Ահա ես այդ բառը գիտեմ - ամենից լավն, իմաստալիք,
Իսկ դա միայն անունն է քո, և այդ անունն է - Ստալին:

Ամեն ինչ չափ ու սահման ունի, բայց ոչ՝ մեր Ստալին երգողները, և
այդ չափն անցնողները ոչ թե ամոթի, այլ երջանկության պահեր են
զգացել «Ո՛ր՛ ալվելի» սկզբունքով: Ուզում ենք հարց տանք՝ իսկ պոետ
Վահուհուն ո՞ւմ հետ համեմատենք:

Օ, ստալինյան թեման, ինչպես ռենտգենի ճառագայթները, թափան-
ցում է հոգու խորքերը ու հստակ ցույց տալիս հեղինակի ինչ լինելը: Բա-
նաստեղծ Գևորգ Էմինը թեև ծիշտ հայրենիքի պաշտպանության
զորակոչիկի տարիքին էր (ծնվել է 1919 թվականին), սակայն Մեծ Զայ-
րենական պատերազմին (ի դեպ, ինչպես և Սուրեն Վահուհին՝ ծնվ. 1910
թ., ինչպես և Գուրգեն Բորյանը՝ ծնվ. 1915 թ.), չի մասնակցել, փոխա-
րենը մի ամբողջ գրքով գովաբանել է Ստալինի ծխամորժը (տե՛ս Գ. Է-
մին, «Խաղաղության ծխամորժը», Ե., 1942), դրա շնորհիվ բրոնյա է
ստացել և ինքն էլ սկսել ծխամորժ ծխել: Սակայն ավանդույթը չխախ-
տենք, խոսենք միայն այն գործերից, որոնք տպագրված են այս ժողո-
վածուում: Ուրեմն սկսենք հենց «Խաղաղության ծխամորժը» (1941)
բանաստեղծությունից: Եվ որ ցրված ընթերցողը չփոթեր, թե ո՞ւմ ծխա-
մորժի մասին է խոսքը՝ Ստալինի՞, թե՞ հեղինակի, հեղինակը այն ձոնել
է Մեծ Ստալինին.

Խաղաղ էին հող, օվկիան ու երկինք,
Եվ դո՛ւ, ազգերի մեծ եղբայրության
Ծխամորժն էիր բռնել քո ձեռքին.-
Ծխամորժը քո սուրբ խաղաղության,
Որի կապույտ ու հավերժ ծխի տակ
Ծաղկո՞ւմ էր ազատ ու մի նոր երկիր:
Բայց ելան վայրի հորդաներ խավար...
...Հա՛րկ վերջին անգամ ցասման սուրը քո,
Հա՛րկ, մորիկները քեզնով են շնչում,
Եվ տիեզերքը քո զարկն է տենչում:

*Ձա՛րկ, և կրկին ա՛ռ ծխամորժը քո,
Եվ խաղաղության ծիծեռնակը թող
Իր բույնը հյուսիս ո՛ղջ տիեզերքում:*

Ծխամորժը, որ փրկեց Էմինին ռազմաճակատից, յուրովի լեյտմոտիվ է դառնում Էմինյան ստալինիանայում: Ահա հաջորդ՝ «Կրակը» բանաստեղծությունը (1948 թ.), որը, հենց ըստ Էմինի հղումի, «ճակատային ֆուլկոր» է, և քանի որ հեղինակը չի եղել ճակատում, փոխ է առել ուրիշից: «Աշակում ըստ Կեդրենի», սակայն պիտի իմանար Էմինը, որ Կեդրեն ռուս բանաստեղծ չկար, այլ կա... Կեդրին: Սա մի պարզամիտ ու շինծու «հեքիաթ» է, թե ինչպես կրակի գծում զինվորի կպցրած ծխախոտի կրակը հասնում է... Ավելի լավ է խոսքը փոխանցենք ծխամորժների սիրահարին.

*...Եվ այսպես, կռվում էր զինվորը ճակատում,
Կռվում... ու չգիտեր (որտեղի՞ց իմանար),
Որ մարշալն այդ պահին Մոսկվա էր շտապում -
Չինվորի կրակով գլանակը վառած:*

*Ծխում էր մարշալն ու զեկուցում Կրեմլին,
Եվ ասում են, երբ որ մարշալը դադարեց,
Ստալինը՝ հանգիստ բարձրացավ իր տեղից
Ու նրա կրակից ծխամորժն իր վառեց...*

*Վառե՛ց ու հաղթության հրամանը գրած՝
Ժողովուրդը գոչեց շինարար սխրանքի:
... Եվ իբրև Մոլոտովն Ասամբլեա թռավ -
Գլանակը վառած ծիշտ այդ նույն կրակից...*

Այսպիսով, Էմինին հաջողվում է, չտեսած ո՛չ Ստալին, ո՛չ պատերազմ, և՛ առաջնորդի հետ զրուցել, և՛ Հայրենականի դրվագները պատկերել, և՛ այս «հատուկ ծառայությունների» համար առաջիններից մեկը հայ բանաստեղծներից պարգևատրվել Ստալինյան մրցանակով:

Երբ որոշել են բանաստեղծ Աշոտ Գրաշուն ներկայացնել Ստալինյան մրցանակի, դիմել են Ավետիք Իսահակյանին՝ ստանալու համար հավանությունը: Ասում են, Վարպետը պատասխանել է հետևյալ կերպ. «Այն օրվանից, երբ Էմինը ստացավ Ստալինյան մրցանակ, խախտվեց այդ մրցանակը տալու տրամաբանությունը, այնպես որ, եկեք այդ խախտված տրամաբանությամբ Գրաշուն էլ ներկայացնենք մրցանակի»:

Երեք երգ ու տաղով ներկա ժողովածուում ներկայացված է Ստալինյան մրցանակի «հավակնորդ» Ա. Գրաշին: Գրաշին նույնպես հեռու է եղել պատերազմական թոհուրոհից, ծնվել ու Հայրենականն անց է կացրել Բաքվում, բայց ո՞վ կհանդգներ ռազմաճակատ տանել Գրաշուն,

որի բանաստեղծությունների առաջին գիրքը վերնագրված էր «Իլիչը մենք ենք», իսկ 1938 թվին տպագրված գրքի անունն էր «Ժողովրդի հետ», 1942 թվականին՝ «Ռազմի քնար»։ Գնանք առաջ՝ Ֆրանսիա՝ Գրաշու ներկայացրած «Սովետական պավիլիոնը Փարիզում» (1949 թ.) ուտոպիական երազը։ Պոետ Գրաշին Մոսկվա սուրացող գնացքում հանդիպում է մեկ այլ «вернопопадания», ծագումով Գյումրիից, մոսկվաբնակ նկարչուհի Սարիամ Ասլամազյանին՝ «սոցոեալիզմի» ապոլոգետ։ Գրաշին իր ողջ պատումը կառուցում է Սարիամի պատմածի հիման վրա։ Այնպես որ, կառուցած պավիլիոնը ավելի շատ վառ ֆանտազիա է, ուտոպիական երազանք. աշխարհի ազգերը մտնում են «Սովետական պավիլիոնը»՝ իրենց պաշտամունքը հավաստելու Կրեմլում նստած «երկրագնդի մեծ իմաստունին»։ Հավատարմության ու խիճուկի էքստազի մեջ հեղինակը ինչ-որ մի պահ կորցնում է մտքի թելը ու անցնում անտրամաբանական, պարոդիկ աստիճանի գովասանքների հեղեղի... Գրաշի պիտի լինես, որ Գրաշու պես գրես, բայց և հոգեբույժ պիտի լինես, որ Գրաշու գրածից մի բան հասկանաս.

*Գնացքում նրան հանդիպեցի
Նկարչուհուն իմ հայրենիքի,
Վերադառնում էր հայրենի տուն
Սենայի ափերից։ Երգս նրա
Քայլերով հպարտ շրջում է արդ,
Աչքերով նրա լուրջ ու խոհուն
Հայում հեռվում Փարիզյան
Ցուցահանդեսն այն միջազգային,
Ուր պավիլիոնը Սովետական
Այցի են գալիս հոծ խմբերով...*

*Գալիս են հորդում ու ծովանում
Սովետական իմ պավիլիոնում
Բարեկամներն ազատության...
Բերում են նրանք երկրագնդի
Միակ փրկարար իմ աշխարհի
Հորավարների զորավարին,
Առաջնորդների առաջնորդին,
Մարգարեների մարգարեին,
Իմաստունների իմաստունին
Անհուն հարգանք ու մեծարանք,
Բերում են վարդեր, բոսոր, որպես
Արշալույսները Ֆրանսիայի,
Բերում են վարդեր հրապուրուպուր...
..«Արև՛ Ստալինին, արև՛ Նրան,
Ով մեր տանջահար, հեզ մարդկության
Չեղքերից բռնած տանում է արդ
Լույս պարտեզները Կոմունիզմի» -*

Գրում են մի խումբ կանայք հնդիկ
Կրծքին ցողաթուրմ կակաչների:

... «Հային հայրենիք տվեցիր Դու,
Եվ մեծ պետություն եղբայրական -
Վերադառնում ենք մենք Հայրենիք,
Ստալի՛ն, եղիր մի՜շտ երջանիկ» -
Տախտականածից «Ռուսիա» նավի
Գրում են հայերն հայրենադարձ:

... «Իմ սև աշխարհը լինչահարվող,
Ստա՛լին, մի օր կարեգակվի,
Փառք դրոշակիդ - արեգակիդ» -
Երգում են վարդերը նեգրերի:

Հայ պոեզիայում դեռևս «Կոմունարների պատերը» չէին «բարբա-
ռում միշտ ծեգից մինչ ծեգ», «Եուշանները ձյունածերմակ» չէին խոսել
և չէր «երգել ծաղկեփունջն ալբանական»: Մի տեսք, ինչ պատկեր է
գծում Գրաշու բորբոքված երևակայությունը.

Ծաղկեփնջերն են խոսում բոլոր,-
Ծաղկեփնջեր, որ լեռնանում են,
Քսվում տանիքին պավիլիոնի,
Մեծ Առաջնորդի բյուստը վսեմ
Լողում է կարծես վարդաշխարհում,
Որպես հաղթական նավ օվկիանոսում:

«Իմ ոսկե գիրք» է անվանում Գրաշին Ստալինյան կոնստիտուցիան՝
«համաժողովրդական օրենսգիրքը».

Իմ ոսկե գիրք, իմ ոսկե գիրք, քո ամեն մի տառն եմ սիրում,
Ստալինի ձեռքով գրված քո ամեն մի բառն եմ սիրում:

Մեր հարսերն էլ չեն թաքնվում ու ամաչում հին լաթերով,
Խաս մետաքս են հիմի հագնում, նախշած հազար ոսկի թելով:
Հառ շորեր են հիմի հագնում, կարված իրենց նուրբ մատներով,
Ման են գալիս օրոր-շորոր մեր բաղերով՝ լի վարդերով:
Միրգ են քաղում անհուն սիրով համայնական պարտեզներում,
Ստալինի մեծ անունը պահած իրենց վարդ սրտերում:

Եվ կրկին ու կրկին իր անմնացորդ նվիրումն է հավաստում.

*Մեր իմաստուն Առաջնորդի անպարփակ հանճարն են սիրում,
Մեր մեծ Կրեմլի վեհ ամբիոնից արտասանած ծառն են սիրում:
Ոսոխներին բնաջնջող չեկիստական ձեռքն են սիրում,
Սահմանապահ ընկերներիս արթուն աչքը, երզն են սիրում:*

Գրաշուն, թեև գրական համքարությունում լուրջ չէին ընդունում, նա իր էությամբ վտանգավոր մարդ չէր, ինքն էր ու իր երգը, և չէր կարող Գրաշին այլ կերպ գրել: Պարզապես մարդու տրամաբանությունը Ստալինի հողի վրա խախտվել է.

*Ես երգում եմ իմ երկիրը, ուր ծխամորժն Առաջնորդի
Սրբիկներից հետո նորից խաղաղ կեցած Մասսի նման
Չլուսանման ծովսն է ծխում խաղաղության,
Խառնում լեռները լվացող եթերային թարմ կապույտին:*

Հմուտ ու փորձված քննողների կողքին աճեց երեկվա պիոներ-կոմսոմոլներից մի սերունդ, անգիտակից, թույլ, սակայն հավատարմագրված վարչակարգին:

Սույն ժողովածուն կազմողները, ի՞նչ է, չէ՞ն զգացել, որ, օրինակ, հեռու են պոեզիայից Գուրգեն Բորյանի գրվածքները, սակայն մի ներքին վախ են ունեցել, որ նրան պետք է ներկայացնել: Ժողովածուում Բորյանից բերված գործերը այնքան թույլ են, որ նրանց մասին պարզապես խոսել չարժե: Գոյական անուն և ապա ածականներ.

*Ստալին դու հզոր, վառ, պայծառ,
Քո անունը հար շողշողուն,
Քո անունը կյանք ու գարուն,
Դու մեր սրտի սերը անհուն, ջա՛ն...
(«Մեծ Ստալին»)*

Տակավին 22 տարեկան է եղել Բորյանը, երբ առաջին անգամ այցելել է Գորի քաղաքը, որը տակնուվրա է արել մեր 22-ամյա «պիոների» հոգեկան աշխարհը. «Քո քաղաքում, ո՛վ Առաջնորդ արևածին, /Երջանկության հազար աղբյուր սիրտս ու հոգիս ողողեցին...»: Եվ ինչպես այս բերկրանքը չկիսես մեր «սովետական երիտասարդության» հետ.

*Չէ՛ որ, անգին մեր Առաջնորդ, դու ծնվել ես այս քաղաքում...
Ամեն մի տեղ քե՛զ են տեսնում, դո՛ւ ես ժպտում ինձ հայրաքար,
...- Քեզ բյուր ողջույն, Առաջնորդի հայրենական Գորի քաղաք...
Իսկ հայացքս հառած հեռում՝ պայծառ Կրեմլի լույս աստղերին,
Գոչում եմ ես՝ իմ սերը քե՛զ, իմ կյանքը քե՛զ, մե՛ծ Ստալին:*

Ի՞նչ հնարքի ասես չեն դիմում մեր պոետները Ստալինի փառաբանման էստաֆետում: Ահա ոչ անհայտ Սողոմոն Տարոնցին ռուսերենից վերցրել ու մշակել է հայերեն տաջիկական մի լեզենդ «Երջանկության գիրքը» անվամբ, հասել մինչև Լենկթեմուրի դարաշրջանը, երբ հավիտյան թաղել են «Երջանկության գիրքը», և ահա մեր օրերում Ստալինն այդ գիրքը հաղթականորեն կյանքի է կոչել...

Այդ տաջիկական լեզենդը եզակի հյուր չէր հայոց ստալինապատման ժողովածուում: Ահա մեկ այլ տաջիկական լեզենդ էլ գրքում վերապատմում է Թիֆլիսում մտավորականի ընտանիքում մեծացած, մինչև իսկ Սերգեյ Գորոդեցկու «Lex поэтос» գրական խմբակին աշխատակցած, շատ բարեկիրթ անձնավորություն՝ բանաստեղծուհի Յոփսիմե Պողոսյանը: Գուցես ճիշտ ընտրություն է արել մեր հարգելի բանաստեղծուհին, ժողովրդի լեզվով ասած շառից հեռու, եղել է տաջիկական լեզենդ՝ «Երկնագույն գորգը», որը նա թարգմանել-մշակել և ներկայացրել է ընթերցողին: Ընդ որում, «Գորգը» հյուսված է բավականին հմուտ ու ստալինյան թեմային սուսկ հպանցիկ առնչություն ունի:

Մեր հայ բանաստեղծուհիները երևում է սիրում են գորգ հյուսել. ահա երիտասարդ բանաստեղծուհի Շողիկ Սաֆյանը նույնպես անցնում է գորգագործության, արդյունքում Ստալինի շատ օրիգինալ դիմանկարն է ստացվում.

*Ու Առաջնորդի պայծառ ծակատին
Ես իմաստության կնճիռ հյուսեցի,
Եվ աչքերի մեջ մեծ ապագայի
Պատկերը վառման նուրբ նկարեցի:*

Թեև երկուական գործերով են ներկայացված Սամվել Գրիգորյանը, Վահան Գրիգորյանը և Մեսրոպ Մերուժանը, սակայն չգիտես ինչ անուն տալ հիշյալ հեղինակների գրվածքներին, ոչինչ չի փոխվի, եթե բանաստեղծների անունները տեղերով փոխես. նույնը չէ՞, թե ով է գրել հետևյալ տողերը.

*Լույսեր վառած, դրախտ դառած ծաղկաբույր մեր աշխարհում,
Պայծառ սիրով, ջերմ հույզերով իմ լույս սերն է քեզ բերում...*

*...Իսկ անպարփակ, անծայրածիր երկիրն իմ
Ունկնդրում է Առաջնորդին իմաստուն...*

*...Ու վար կիջնեն աստղերը - մեր տներում կշողան,
Մեր սրտերն ու մեր հոգին լույսով լեցուն կլինի:*

Ռվ կարող է հերքել լեֆականների դրույթը, որ պոեզիան կոլեկտիվ

աշխատանք է... Պանեգիրիկները լինում են տաղանդավոր և անտաղանդ, անպայման չէ, որ տաղանդավոր բանաստեղծը անտաղանդ գործ գրած լինի կամ հակառակը, սակայն կան անկեղծ ստալինիստներ, կան և շինծու, կեղծ ստալինիստներ:

Ո՛վ է առաջինը գրել Ստալինի մասին... Մեր գրախոսվող գրքում դա, ինչպես և պետք էր սպասել, պրոլետարանաստեղծ Յակոբ Յակոբյանն է: Մեր բանվորական շարժման մետր-բանաստեղծ դեռևս 1925 թվականին իր «Վոլխովստրոյ» պոեմի վերջաբանում, ողբալով Լենինի կորուստը, երևան է բերում նոր առաջնորդի անունը.

*Չկա՛ Լենին... (Վոլխովստրոյը մի մարմնացում Լենինի),
Որ պատվիրեց Վոլխովստրոյը շինել, ինչ էլ որ լինի...
Չկա Լենին, սակայն... սակայն... կան Լենինի զավակներ,
Որ շարունակ մարմնացնում են նրա թողած պատգամներ:
Յրեն՝ Ստալին... պողպատ ձեռքով երկրի դեկը ձեռքն առած
Ղեկավարում, վարում է մեր կարմիր նավը դեպ առաջ,
Աշակերտը մեծ ուսուցչի արժանավոր է զավակ -
Արթուն պահակ մեր Միության՝ հսկող ամեն ժամանակ:*

Մի գանձ էլ ունի սույն գրքում մեր հարգելի հայկական Վերհարնը (որի մասին Շիրվանզադեն ասել է՝ չգիտեմ ինչ է, բայց վերը՝ խառն է), գրված արդեն 1936 թվականին, իր մահկանացուն կնքելուց մի քիչ առաջ...

Որոշ առումով «Կրեմլի դահլիճում» բանաստեղծության մեջ նա այլաբանական իմաստ է փորձում ներդնել, այլաբանական, քանզի գրված է 1936 թվին, մի շրջան, երբ Յակոբյանը համոզվեց, որ Ստալինը լիովին կատարել էր Լենինի աշյունի առաջ տված «պատմական» երդումը. «Уходя от нас товарищ Ленин завещаю» սկսվածքով.

*Եվ դեմքը խրոխտ մեծն Լենինի,
Որ լուսերի մեջ բեմումն է բազմած՝
Նույնպես ժպտում է նման Ստալինի -
- Վեց երդումն արդեն պատվով կատարած...*

Երկուական գործերով ներկայացվածների շարքը եզրափակում է Վահագն Դավթյանը: Դավթյանը, ի տարբերություն հրաշալի «քառյակի», Յայրենական մեծ պատերազմին մասնակցել է: Սույն գրքում նա հանդես է գալիս տուրուխանյան գիշերվա պես երկարաշունչ «Տուրուխանյան երկրում» պոեմով (17 էջ, և դա միայն ֆրանգմենտներն են): Ահա ուշագրավ մի դրվագ, երբ Ստալինը հետաքրքրվում է 1915 թվի ձմռանը իր մոտ Կուրեյկա հյուր եկած նույնպես աքսորական Սուրեն Սպանդարյանից նրա ընտանիքի մասին.

- Իսկ ի՞նչ լուրեր ունես, Սուրեն, տանից,
Ինչպե՞ս են դուստրերդ՝ Անժելիկան, Մանյան,
Մնց է արդյոք քե՛ֆը փոքրիկ Ստեփանի,
Եվ ինչպե՞ս է ապրում Օլգա Վաչեսլավնան:
- Օլգան լավ է, լավ են նաև մանկիկներս,
Իրենց թոթով գրչով հաճախ գրում են ինձ,
Բայց, այ, վերջերս խիստ մտահոգվում եմ ես,
Որ «3» է ստանում Մանյան ռուսերենից...

Արդեն «փոքրիկ Ստեփանի» հալը իմանալուց հետո Ստալինը պայծառանում է, և այդ խոհուն զրույցում վերակերտում է Լենինի դիմաքանդակը.

- Այո, Սուրեն, երբ ես դեռ տարիներ առաջ
Ծանոթացա նրա մեծ կյանքին ու գործին,
Ինձ թվաց, որ ոչ թե մարդ է նա հասարակ
Կամ սոսկ մի դեկավար - այլ՝ լեռնային արծիվ...
Ու երբ Տամմերֆորսում հանդիպեցի նրան,
Հզացի, որ մեծ է նա մեծերից բոլոր,
Որ գերում է, տանում է անվարան
Նա ամենքին մտքով իր զորավոր...

Զպարծենալ երբեք հաղթանակով տարած,
Ու պարտության դեպքում չնվճվալ.
Սկզբունքն այս վսեմ միշտ օգնում է նրան
Հաղթահարել ամեն անակնկալ:

Կուզենայինք հարց տալ մեր պատմիչին՝ Ստալինին, այդ ի՞նչ հաղթանակով կարող էր պարծենալ Լենինը 1915 թվականին: Թերևս այդ մասին գիտեր միայն Վահագն Դավթյանը:

Բայց և հանուն ժմարտության պետք է ասել, որ հեղափոխական լիդերներն էլ մարդիկ են, եթե անգամ հայտնվել են արհեստական իրավիճակներում, զբաղված են հնարովի երկխոսությամբ:

Դրությունը չեն փրկում Վահագն Դավթյանի ո՛չ «Մոսկվա» և ո՛չ անգամ «Առաջնորդի ծանոթ ծխամորժը...» բանաստեղծությունները:

Բանաստեղծ Զրաչյա Յովհաննիսյանը ծառայել է երկրին և՛ խոսքով, և՛ գործով, եղել է ոչ թե բանակային թղթակից կամ զինկոմիսարիատի աշխատակից, այլ՝ 1942 թվականից զինվոր և զինվոր կրակի գծում Ստալինգրադյան ճակատում: Սույն գրքում նրա ներկայացրած միակ «Պահ Մոսկվայում» բանաստեղծությունը հեռու է վերամբարձ երդումներից, կուրծք թմբկահարելուց, շինծու իրավիճակներից:

Հին ընկերներ և հասակակիցներ են եղել Սիլվա Կապուտիկյանը և Զրաչյա Յովհաննիսյանը, թեև Սիլվան Զրաչյայից երեք տարի առաջ է ՍՄԿԿ շարքերն ընդունվել, և մինչև Զրաչյան իր առաջին գիրքը կիրա-

տարակեր, Սիլվան հասցրել էր երեք գիրք տպագրել: Ինչպես և Հրա-
չյան, Սիլվան էլ է սույն գրքում ներկայացվել մեկ բանաստեղծությամբ՝
«Առաջնորդին»: Ասելիքին հավաստիություն տալու համար Կապուտի-
կյանը ձեռք է մեկնում «արտասահմանյան թերթերից» հղումը, որպես
բնաբան ընտրելով «Ստալինը ցույց է տալիս խաղաղության ծանա-
պարիը» ֆրագը, որը հավանաբար փոխ է առնվել ֆրանսիացի կոմու-
նիստների «Յումանիտե» թերթից: Ի վերջո, ինչո՞ւ է տագնապում
բանաստեղծուհին.

*Աշխարհը քեզ է նայում նորից,
Նա, որ հենց նոր է մահից փրկված,
Բայց չհագեցած արյուններից
Ոսկու տերերը եղեռնաբաղձ
Ցանցել են ուզում նրան կրկին
Պատերազմների նոր ոստայնում...*

Պետք է նոր Փրկիչ, և այդ Փրկիչը ըստ Կապուտիկյանի՝ Իոսիֆն է:
Եվ սա սոսկ էմոցիոնալ զգացմունք չէ, սա հավատամք է.

*Երբ դո՛ւ ես հույսի խոսքը ասում,
Ցրվում է մութը մռայլադեմ.
Բո շուրթից ելած ամեն խոստում
Մեր մեջ մարմին է առնում արդեն,
Ու քո հույսով է շնչում կրկին
Հարթնող այս հողը կենսաշաղախ,
Փռի՛ր տագնապած այս աշխարհին
Բո ծխամորժի ծո՛վը խաղաղ...*

Իմաստալից բանաստեղծություն է գետեղել ներկա ժողովածուում
Համո Սահյանը՝ Գուսան Համո Սահակյան կեղծանվամբ: Եվ չմոռանա՜մ
ընդգծել մի կարևոր հանգամանք, որ պատերազմի տարիներին Համո
Սահյանը 4 տարի ծառայել է ռազմածովային նավատորմում: Սահյանի
միակ բանաստեղծության վերնագիրն է «Ցնծություն», և սա ավելի շուտ
բնության, կյանքի, լուսավոր ուժերի ցնծությունն է: Սահյանը մնում է
Սահյան իր անկեղծ մտորումներով, լակոնիկ պատկերներով.

*... Մառախլապատ գիշերներից
Մեր երազած օրին հասանք,
Հույսերով լի, հույզերով լի
Այս բազմալույս նորին հասանք...
...Մռայլ կյանքի անտակ կիրճից
Այս վառ լուսաբացին հասանք...
...Բախտի խորունկ խորխորատից
Լուսապայծառ նորին հասանք...*

Սահյանը վարպետորեն հարմարեցրել է իր ասելիքը խորհրդային աստիքուտիկային՝ «Կոմունիզմին լուսապայծառ», «Սոցիալիզմի արեգակին», «Անմարելի երջանկությանը», «Ստալինյան մեր մեծ դարին»: Իհարկե, սա էլ մի էջ է խորհրդային ներբողների շարքից, բայց ոչ թե վանող, այլ՝ հնարամիտ էջ:

Թվում էր, թե գրքում կբացակայի Պարույր Սևակը, բայց ոչ, նա էլ կա: Ուրեմն ապահովված էր բոլորի ներկայությունը: Բայց կա ներկայության անսքող քննաքնով, մարդկային էլեմենտար արժանապատվության կորստով, և կա ներկայության բառի արժեքը հարգող, բանաստեղծ հասկացողությունը գետնին չտալով, պահպանելով սեփական ես-ը, անգամ դժվարին փորձության պահին:

Այս վերջին բնորոշումը լրիվ համապատասխանում է Պարույր Սևակի՝ ստալինյան ավմանախում ներկայացված «Խաղաղություն և հաղթանակ» բանաստեղծությանը: Սևակը փորձել է խոհական երանգ տալ գրվածքին, ըստ էության կերտելով մի բանաստեղծություն, որը ժողովրդի տարած հաղթանակի արժեքավորումն է, և ուր առաջնորդը զուտ կրավորական դեր ունի.

*Ճերմակել է նորից աշնան դաշտը դեղին -
Կրկին ձյունն է իջնում անհունորեն խաղաղ,
Ամեն աղմուկ ու ձիչ թվում է անտեղի,
Անհարիր է թվում ամեն մի աղաղակ...
... Գիտես - ինչպես օջախն ամեն հարկի ներքո,
Ամեն կրծքի ներքո վառ հուրն է հաղթության,
Պատրաստ է ամեն սիրտ Առաջնորդի խոսքով
Ինչպես երեկ՝ կրկին, կրկին ի մարտ երթալ...*

Սույն ժողովածուում, կարծես անկախ իրենցից, հոգեբանորեն բացվում են մեր հեղինակները: Ի վերջո, ինչ թեմա էլ լինի, որքան հանդիսավոր ու կարևոր, այն չի կարող փրկել թույլ բանաստեղծությունը: Ահա վառ օրինակ՝ բանաստեղծ Բաբկեն Կարապետյանը, թեև բավական փորձ է ձեռք բերել Ստալին գովերգելու, նոր երկում ստեղծում է շատ հանդիսավոր մի իրավիճակ՝ Մոսկվայում, Կրեմլում, Գեորգիկյան դահլիճում Հայ արվեստի դեկադայի բացումն է: Այս է ավետում «Կրեմլում» բանաստեղծությունը.

*...Այստեղ է մեր ժողովուրդը, բազմադարյան ազգը հին,
Որ բերել է իր արվեստը՝ բարձրաշառաչ իր հոգին:
...Եվ ներս մտավ մեծ Արևը, շրջապատում հարազատ,
Ուռռաները որոտացին բոց կրծքերից հարազատ:
...Դահլիճն ասես լուսավ լցվեց, լցվեց հրով անսպառ,
Ասես հազար արև վառվեց մեր սրտերում սիրավառ:*

Շահումյանը սիրակարոտ, կարծես ահա մոտեցավ,
Ստալինին գրկեց սիրով, ապա նայեց հրացայտ...
...ժողովուրդն իմ ջլաքազուկ ոսկե թասը բարձրացրել,
Ու խմում է կենացը մեծ Ստալինի համձարեղ...

Իսկ բանաստեղծ և արձակագիր Հովհաննես Դուկասյանը, որ վերջերս էր հայրենիք վերադարձել Պարսկաստանից, երգում է մեծ խնդության հայրենադարձության թեման.

Եվ պանդխտության ցուպս այրելով՝
Ես վառ տենչերով հայրենիք մտա,
Վշտից ազատված, ուրախ երգելով
Ծաղկադաշտերով հայրենիք մտա:

Իրականությունը պլալացնող այս պատկերը պատումի սոսկ սկիզբն է, հաջորդ հատվածներում նորաթուխ սովետական քաղաքացին իր երախտիքն է արտահայտում.

...Դու փրկեցիր մեզ սրից, խորշակից, ժամփաներից քար,
Քո արև սիրտը վանեց մեր հոգու գիշերը երկար,
Էլ մենք պանդուխտ չենք օտար ափերում.
Ենեշող տներն են, ջա՛ն, ողջունում մեզ,
Տե՛ս, մեկիկ-մեկիկ նրանց համբուրում,
Երդվո՛ւմ եմ ես Քեզ:

Ո՛վ մեծ Բարեկամ հայ ժողովրդի,
Ինչպես նոր երգիչ, Քո փառքը կերգեմ,
Իբրև զինվորդ ու պոետ որդիդ,
Արշալույսներում Քո փառքը կերգեմ...
(«Երդում»)

Գուցեև անկեղծ է բանաստեղծը, սակայն բոլոր դեպքերում նա, որ միայն 1946 թվին էր ներգաղթել, պիտի ավելի խորամուխ լիներ հայրենիքի իրականության մեջ և ապա նոր իր երդումը տար. քանզի երդմնազանց լինելը ավելի վատ նշան է, քան երդում տալը...

Մերկապարանոց գովեստների, անդեմ պատկերների, դատարկ փառաբանումների մի հոծ շղթա են կազմում այմանախում մեկ երկով հանդես եկած բանաստեղծներ Հենրիկ Թումանյանի, Արշալույս Սարոյանի, Սաղաթել Հարությունյանի, Արտաշես Պողոսյանի, Գրիգոր Գուլյանի, թիֆլիսեցի բանահավաք Գրիգոր Արտունու գործերը: Իրար ձայն տված Ստալինի կենացն են խմում Ցական Ծողենցն ու Վահան Արամունին:

...Մենք խմում ենք նորից կենացո առաջին,
Ո՛վ Առաջնորդ, մեր հաղթանակ ու ավյուն,-
Դու, որ բերիք խաղաղության օրը քինջ -
Դարձնելով մեր երազները կյանք անհուն:

Ցական Շողենց

...Ահավասիկ և մենք այս նոր տարվա շեմին
Բարձրացնում ենք բաժակ գինով լեցուն,
Խմում Ստալինի կենացը և գոչում.
- Փա՛ռք քեզ, Առաջնորդ մեր հզոր ու մեծ:

Վահան Արամունի

Մեր ասելիքը լրիվ էր լինի, եթե մենք չանդրադառնայինք գրքում բերված Ավետիք Իսահակյանի «Մեծ Ստալինին» (1939) բանաստեղծությանը: Այդ բանաստեղծությունը գրվել է Ստալինի ծննդյան 60-ամյակի նախօրեին՝ 1939 թվականին, տպագրվել այդ օրերին և Վարպետի հետագա ժողովածուներում: Կարո՞ղ էր արդյոք Իսահակյանը այս բանաստեղծությունը չգրել: Նա, ինչպես և մեր գրախոսվող ստալինյան ամանախի բոլոր հեղինակները, ովքեր որ ապրում էին Սովետական Հայաստանում, չէին կարող չգրել, չէին կարող ցույց չտալ իրենց վերաբերմունքը Ստալինին, երբ ամբողջ երկիրը տոնում էր առաջնորդի 70-ամյա հոբելյանը: Դա կդիտվեր բացեիքաց դեմոնստրացիա, Ստալինի պատմական երևույթի ժխտում, այսինքն՝ հակախորհրդային գործառույթ՝ այստեղից բխող իր բոլոր հետևանքներով: Եվ շատերը, թե՛ ներսում, թե՛ դրսում, գուցե և սպասում էին Իսահակյանի մերժմանը, որից հետո նրա ֆիզիկական ներկայությունը կլիներ օրերի խնդիր:

Դրա՞ համար արդյոք Իսահակյանը վերադարձավ խաղաղ փարիզյան կյանքից, թողնելով և՛ անդորր, և՛ ազատ ստեղծագործելու անվերջ հնարավորություն, և՛ հին ընկերներ, և՛ հին գաղափարներ (որոնց, ի դեպ, իր էությանը հավատարիմ մնաց մինչև վերջ): Ո՛չ, նա եկավ, որովհետև անելիք ուներ: Եվ նա հեռու էր կամավոր ինքնագոհության գաղափարից:

Նա ասելիք ուներ: Նա իր գոյությամբ, իր ներկայությամբ և իր գործունեությամբ շա՛տ-շա՛տ պետք էր իր հայրենիքին: Ինչպես և հենց այս գրքում հանդես եկած շատ երիտասարդ բանաստեղծների նա պիտի ցույց տար տաճար տանող ճամփան...

Իսկ այն, ինչ նա գրեց, կարող է ընկալվել երկակի իմաստով, և ես առաջինը չեմ դա ասում, այդ ոչ դժվարությամբ կարող է նկատել յուրաքանչյուր ուշադիր ընթերցող, եթե կետադրական մի փոքր փոփոխություն արվի, անգամ և առանց փոփոխության, զուտ տեքստային իմաստով: Մեզ թվում է, որ Իսահակյանը նման շեշտադրումը դիտավորյալ չի արել, դա ստացվել է պոեզիայի վերին թելադրանքով. այդպես է լսվել նրա ականջում, այդպես է գրվել, և հետո տողը միտք դարձել...

Բարձրացրել ես դու պատմության սուրն ահեղ
Երկրի վրա՝ ոճիրներով ծանրաբեռ.
Ստեղծագործ խոսքըդ հզոր և անշեղ
Ողջ աշխարհի սրտում կրակ է վառել:

Ելան ծովերն ու ծովերին միացան,
Դու վարեցիր ժողովուրդներ քաղմահեծ
Ազատության, արդարության հանգրվան,
Նոր մարդկության մի նոր աշխարհ լուծնկեց:

Բռնկվել է արյան հեղեղը կրկին,
Վրնջում են նծույզները երկաթի,
Սակայն սանձը մորիկների գայրագին
Դու բռնել ես քո կուտ ձեռքում պողպատի:

Եվ տանում ես հաղթանակից հաղթանակ
Հայրենիքը մեր անեզերք, աննկուն.
Քեզ անսպառ կամք ու կորով, երկար կյանք,
Մ'վ մեծ գործի մեծ առաջնորդ իմաստուն:

Համեմատում ենք այս բանաստեղծությունը գրքի այլ երկերի հետ և զուտ պոետական արվեստի, զուտ ասելիքի ծանրակշռության և լեզվական կատարելության իմաստով գալիս այն եզրակացության, որ Իսահակյանի գրվածքը թերևս լավագույնն է գրքում:

Իսահակյանը իմիջիայլոց ոչինչ չի գրել և ոչ էլ պատվեր է: Կատարել: Եղել է խնդիր, և նա փայլուն կերպով այն լուծել է: Ուրիշ հարց է՝ որքանով էր այդ գրվածքը Իսահակյանի սրտով: Եվ արդյոք չէ՞ր փոշմանել ինքը, որ գրել էր պոեզիայի տեսանկյունից կատարյալ գործ: Չէ՞ որ կարելի էր հետևյալ մտածողությունը ի սպաս դնել՝ որքան վատ, այնքան լավ: Բայց սա անհարիր էր Իսահակյան ստեղծագործողին: Նա չափազանց հարգում էր պոեզիան և գիտեր իր ստորագրության արժեքը:

Վերջացնենք այս թեման ավելի զվարթ տրամադրությամբ:

1955 թ. Հայաստանի գրողների միության վարչության նիստ է տեղի ունենում՝ կապված անհատի պաշտամունքի քննադատության և խրուշչովյան ՍՄԿԿ XX համագումարի զեկուցումների հետ: Գրողները թունդ վիժաբանում են, մեկը մյուսին՝ իսկ դու այսպես, իսկ դու այնպես: Նաիրի Ջարյանը տեսնելով, որ շանթերը շատ են ուղղվում իր կողմը, արդարանալու համար ասում է. - Անգամ Իսահակյանն է տուրք տվել Ստալինի փառաբանմանը: Իսահակյանը ստիպված խոսք է վերցնում. - Այստեղ ընկեր Նաիրին խոսեց տուրքի մասին, ես առաջարկում եմ՝ եկեք ետ վերցնենք այդ տուրքերը իմ գրվածքներից և Նաիրիի գրվածքներից, և տեսնենք ում տակը ի՞նչ կմնա...